Հարց

Դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրողները ի՞նչ ժամկետում կարող են հարկային մարմին վերադարձնել ձեռք բերված և չօգտագործված դրոշմապիտակները:

Պատասխան

«Առևտրի և ծառայությունների մասին» ԼՂՀ օրենքի 9.7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրողների կողմից ձեռք բերված և չօգտագործված դրոշմապիտակները վերադարձվում են հարկային մարմին՝ համապատասխան արտադրությունը դադարեցնելու ամսվան հաջորդող եռամսյա ժամկետում:

Հարց

Պարտադիր դրոշմավորման ենթակա ջրերի, հյութերի արտահանման դեպքում դրոշմապիտակների առկայությունը, արդյո՞ք, պարտադիր է:

Պատասխան

Համաձայն «Առևտրի և ծառայությունների մասին» ԼՂՀ օրենքի 9.1-ին հոդվածի 1-ին կետի՝ դրոշմապիտակներով պարտադիր դրոշմավորման ենթակա են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում օտարման ենթակա (օտարվող)՝ օրենքի 9.2-րդ հոդվածում նշված ապրանքները:

Հարց

Ապրանքի ո՞ր մասում պետք է փակցված լինի դրոշմապիտակը:

Պատասխան

«Առևտրի և ծառայությունների մասին» ԼՂՀ օրենքի 9.4-րդ հոդվածի 4-րդ մասի և ԼՂՀ կառավարության 28.12.2013 թ. ««Առևտրի և ծառայությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով պարտադիր դրոշմավորման ենթակա՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրված՝ տարայավորված որոշ ապրանքների դրոշմավորման և վերադրոշմավորման կանոնները սահմանելու մասին» N 983-Ն որոշման համաձայն՝ դրոշմապիտակը պետք է փակցված լինի ապրանքի առավել տեսանելի տեղում՝ վերին կամ կողային մակերեսներին (այդ թվում՝ պիտակի վրա):

Հարց

Անմիջական արտադրող կամ անմիջական ներմուծող չհանդիսացող՝ պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ իրացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ի՞նչ ժամկետներում կարող են իրացվել դրոշմապիտակներով չդրոշմավորված պահածոները:

Պատասխան

«Առևտրի և ծառայությունների մասին» ԼՂՀ օրենքի համաձայն՝ անմիջական արտադրող կամ անմիջական ներմուծող չհանդիսացող՝ պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ իրացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից մինչև 2015 թվականի հոկտեմբերի 1-ը ձեռք բերված՝ դրոշմապիտակներով չդրոշմավորված պահածոների իրացումը թույլատրվում է մինչև 2016թ. մարտի 31-ը ներառյալ:

Հարց

Ի՞նչ արժեք է սահմանված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում արտադրված պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների դրոշմապիտակների ձեռքբերման համար:

Պատասխան

Համաձայն «Առևտրի և ծառայությունների մասին» ԼՂՀ օրենքի 9.5-րդ հոդվածի 3-րդ մասի դրոշմապիտակի արժեքը որոշվում է տվյալ նմուշի դրոշմապիտակի արտադրության, պահպանության, օգտագործումից հանելու հետ կապված ծախսերից:

Ներկայումս ԼՂՀ կառավարության 28.12.2013թ. N 982-Ն որոշման համաձայն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում արտադրված պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների դրոշմապիտակի հազար հատի արժեքը սահմանված է 3 528 ՀՀ դրամ:

Հարց

Սուրճի հիմքով ըմպելիքները, համաբուրային հավելումներով թեյերը արդյո՞ք ենթակա են դրոշմապիտակներով դրոշմավորման:

Պատասխան

Սուրճի հիմքով ըմպելիքները, դեղձի, կիտրոնի, ազնվամորու և համաբուրային այլ հավելումներով թեյերը, ինչպես նաև պատրաստի՝ սպառման ենթակա այլ ըմպելիքները, որպես «այլ ոչ ալկոհոլային խմիչքներ» դասվում են ԱՏԳ ԱԱ 2202 90 ենթադիրքին և ենթակա են պարտադիր դրոշմավորման:

Հարց

Դրոշմապիտակների համար վճարված գումարները ե՞րբ կարող են հաշվանցվել այլ հարկային պարտավորությունների դիմաց:

Պատասխան

Դրոշմապիտակների համար վճարված գումարը կարող է հաշվանցվել այլ հարկային պարտավորությունների դիմաց, եթե հարկային մարմին ներկայացված հաշվետվության համաձայն դրանք օգտագործվել են (փակցված են դրոշմավորման ենթակա ապրանքների վրա):

Հարց

Պիտանիության ժամկետը լրացած դրոշմապիտակներով դրոշմավորված ապրանքների դուրսգրման դեպքում ինչպիսի՞ հարկային պարտավորություններ են առաջանում:

Պատասխան

«Առևտրի և ծառայությունների մասին» ԼՂՀ օրենքի և ԼՂՀ կառավարության 28.12.2013թ. N 984-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան դուրս գրված՝ պիտանիության ժամկետը լրացած ապրանքների մասով հարկային պարտավորություններ չեն առաջանում: Միաժամանակ, պիտանիության ժամկետը լրացած ապրանքների դրոշմավորման համար դրոշմապիտակների ձեռքբերման համար վճարված գումարները ենթակա չեն նվազեցման հարկ վճարողի հարկային պարտավորություններից, դրանք շահութահարկով հարկման նպատակով օրենքով սահմանված կարգով նվազեցվում են համախառն եկամտից: Այդպիսի ապրանքների

վրա փակցված դրոշմապիտակների համար վճարված գումարով նախկինում նվազեցված հարկային պարտավորությունների գումարի չափով արտադրողի մոտ այդ ապրանքների դուրս գրման օրվա դրությամբ առաջանում է դրոշմապիտակների գծով պարտավորություն:

Հարց

Չօգտագործված կամ վնասված դրոշմապիտակները հարկային մարմինների կողմից հետ չընդունվելու դեպքում առաջանու՞մ են արդյոք հարկային պարտավորություններ:

Պատասխան

Չօգտագործված կամ վնասված դրոշմապիտակների վերադարձը սահմանված ժամկետներից ուշացնելու, օրենսդրությամբ սահմանված այլ պահանջների խախտմամբ պայմանավորված հարկային մարմինների կողմից հետ չընդունվելու կամ դրոշմապիտակների կորստի դեպքերում համապատասխան փաստն արձանագրվելու օրվա դրությամբ հաշվարկվում են հարկային պարտավորություններ այն չափով, որ չափով հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով կհաշվարկվեին դրանք, եթե դրոշմապիտակների տեսակին, քանակությանը և տարողությանը համապատասխանող ապրանքները հարկ վճարողի կողմից իրացված լինեին: